



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր

ՀՐԱՄԱՆ

N 164-Ա

«23» փետրվարի 2021թ.

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԵՐԳԵՅԻ ԼԱՉԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ
ՊԱՇՏՈՆՈՒՄՆ ՇԱՆԱԿԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ, 8-րդ և 29.1-րդ կետերն, ինչպես նաև 2021 թվականի փետրվարի 22-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունն ու Քրիստինե Սերգեյի Լազյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. 2021 թվականի փետրվարի 23-ից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի մասնագետի (ծածկագիրը՝ 94-1.4-Մ6-2) պաշտոնում նշանակել Քրիստինե Սերգեյի Լազյանին՝ 6 ամիս փորձաշրջանով:

2. Փորձաշրջանի ընթացքում համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Համբարձում Սաֆարյանին:

Փորձաշրջանը համակարգող Համբարձում Սաֆարյանին՝ առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածով:

3. Քրիստինե Լազյանի աշխատավարձը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



23.02.2021

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ
ք. Գավառ